ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻ ԲՆՈՒԹԱԳՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

ՕՆԻԿ ԴԱՎԻԿՅԱՆ

Անձի առանձնահատկությունների պարզումը, որոնք ազդում են նրա կողմից հանցավոր գործողության այս կամ այն եղանակի կամ անգործունեության, ուստի նաև հանցագործության որոշակի տեսակի ընտրության վրա, վերին աստիճանի բարդ, բայց և անհրաժեշտ խնդիր է հանցավորության կանխարգելման պրոբլեմը լուծելու առումով։ Որոշակի կատեգորիաների հանցագործություններ կատարած անձանց ուսումնասիրումը հնարավորություն է տալիս պարզելու հանցագործների տվյալ կատեգորիային յուրահատուկ անհատական առանձնահատկությունները, բնութագրերը, որոնք չափազանց կարևոր են պրոֆիլակտիկայի միջոցները գիտականորեն կիրառելու, ինչպես նաև այլ անձանց կողմից կատարվող հանցագործությունները բացահայտելու համար՝։

Մարքսիստական փիլիսոփայության մեջ անհատը բնութագրվում է իբրև հասարակական-պատմական կատեգորիա, որն ընդգրկում է մարդու հասարակական էությունը, նրա հոգեբանությունը և կենսաբանությունը։ Անհատի գլխավոր բովանդակությունը կազմում է նրա հասարակական, սոցիալական էությունը, որը մանրամասն քննել է դեռևս Կ. Մարքսը։ Նա գրում է. «...հատուկ անհատի» էությունը կազմում է ոչ թե նրա մորուքը, ոչ թե նրա արյունը, ոչ թե նրա վերացական ֆիզիկական բնույթը, այլ նրա սոցիալական որակը»[2]։ «Մարդու էությունն առանձին անհատին հատուկ վերացականությունը չէ։ Այն իր գործունեության մեջ բոլոր հասարակական հարաբերությունների սմբողջությունն է»[3]։ Բայց անհատը ձևավորվում, դրսևորվում է միայն ուրիշ մարդկանց հետ փոխգործակցելով. «...անհատները թե՛ ֆիզիկապես, և թե՛ հոգեպես արարում են միմյանց և անհատի զարգացումը պայմանավորված է այն մյուս բոլոր անհատների զարգացմամբ, որոնց հետ նա գտնվում է ուղղակի կամ անուղղակի շփման մեջ»[4]։ Այսպիսով, անհատն իր մեջ մարմնավորում է որոշակի հասարակարգի գծեր։ Հասարակական հարաբերությունների սիստեմում արտադրության կոնկրետ եղանակին համապատասխանում է անհատի որոշակի տիպ՝ իր կոնկրետ հայացքներով, սովորություններով, նպատակադրումներով, իդեալներով և վարքով։

---

[1] Г. С. Саркисов, Процессуальные меры предупреждения преступлений, Ереван, 1977.

[2] К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 1, с. 242.

[3] К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 3, с. 3.

[4] К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 3, с. 36, 440.

Անհատի բնորոշման մարքսիստական մոտեցումը նշանակում է ընդունել անհատի մեջ սոցիալականի և սոցիալ-հոգեբանականի դիալեկտիկական միասնությունը։ Ուստի, մարդու՝ որպես անհատի, էությունն այն է, որ նա ունի գիտակցություն, դրա համար էլ անհատի վրա հասարակական պայմանների ազդեցությունը միջնորդվում է նրա ներքին աշխարհով (հոգեբանական բովանդակությամբ)։ Հենց այդ բանն էր մատնանշում Կ. Մարքսը, ասելով՝ «այն ամենը, ինչ առանձին մարդուն դրդում է գործունեության, անխուսափելիորեն անցնում է նրա գլխի միջով, ազդելով նրա կամքի վրա»[5]։

Հոգեբանության մեջ առանձնացվում է անհատի հատկությունների կառուցվածքի չորս ենթակառուցվածք. 1. անհատի սոցիալապես պայմանավորված հատկություններ (նպատակամղվածություն, բարոյական հատկություններ, հարաբերություններ), 2. անհատապես ձեռք բերված փորձ (գիտելիքներ, սովորություններ, անձնական կուլտուրայի մակարդակ), 3. առանձին հոգեկան պրոցեսների անհատական առանձնահատկություններ (արտացոլման ձևեր), 4. անհատի կենսաբանորեն պայմանավորված հատկություններ (խառնվածք, բնազդ, օրգանական, պաթոլոգիական փոփոխություններ)[6]։ Հանրագումարի բերելով այս բոլորը, պարզվում է, որ անհատը ձևավորված է միայն երկու գործոնի՝ սոցիալականի և կենսաբանականի որակական բարդ փոխազդեցությամբ. ընդ որում, գերիշխող դերը պատկանում է առաջինին։ Յուրաքանչյուր մարդ՝ հետևաբար նաև նրա կողմից ներկայացվող անհատ, անկրկնելի, անհատական է։ «Անհատականությունը՝ որպես յուրաքանչյուր առանձին մարդու անկրկնելիություն, նախ և առաջ կենսաբանական փաստ է»[7]։ Բայց անհատի հոգեկան հատկությունները, վերջին հաշվով, բնորոշվում են հասարակական պայմաններով (դաստիարակությամբ և սոցիալական կյանքի ազդեցությամբ)։ Հասարակական և անհատական կեցությունը բազմիցս միջնորդվում է նրա ներաշխարհով, որը եզակի և անկրկնելի երևույթ է։ Սակայն յուրաքանչյուր անհատի անկրկնելիությունը և անհատականությունը ոչ թե մարդուն հատուկ հատկանիշների յուրօրինակություն են, այլ դրանցից բխող առանձնահատկությունների կապերի յուրօրինակություն։

Անձի անհատական առանձնահատկությունները հաշվի առնելը (մարդկային օրգանիզմի կենսաբանական յուրօրինակությունը, զարգացման յուրահատկությունները, անհատական կենսափորձը) հնարավորություն է տալիս պարզելու, թե ինչու միևնույն արտաքին պայմանների ազդեցությամբ տարբեր մարդիկ տարբեր վարքագիծ են դրսևորում։

Հանցագործի անձնավորության ուսումնասիրմանը վերջին ժամանակներս մեծ ուշադրություն է դարձվում։ Իրավաբանական գրականության մեջ առանձնակի սրությամբ են դրվում անհատի հակահասարակական նպատակամղվածության և դրա կայունության հետ առնչվող, իրավախախտողի անձնավորության վրա կոնկրետ կենսաիրավիճակի ազդեցության և այլ հարցեր[8]։

---

[5] К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 14, с. 679.

[6] К. К. Платонов, Психологическая структура личности («Личность при социализме», М., 1968. с. 70); его же, О нравственных и правовых способностях («К новой жизни», 1968, № 1, с. 30—31).

[7] И. С. Кон, Социология личности, М., 1967, с. 29.

[8] Н. С. Лейкина, Личность преступника и уголовная ответственность, Л., 1968; В. Н. Кудрявцев, Причинность в криминологии, М., 1968; И. И. Карпец.

Բայց այդ հարցերի մշակման ինտենսիվությունը չի կանխորոշում դրանց լուծման վերաբերյալ եղած հայացքների միասնությունը սովետական հետազոտողների շրջանում։ Ոմանք գտնում են, որ «հանցագործի անձնավորություն» հասկացությունը պայմանական է և այն պետք է դիտել իբրև հանցավոր արարք գործած մարդու անձնավորություն[9]։ Իսկ մյուսների կարծիքով՝ հանցագործի անձնավորության մասին պետք է խոսել որպես այնպիսի անհատի մասին, որի հանցավոր արարքի մեջ իրենց արտահայտություններն են գտել մեր հասարակության անդամներին խորթ և միայն իրավախախտողի անձնավորությանը հատուկ որոշակի յուրահատկություններ[10]։

Յուրահատուկ հանցավոր անհատ գոյություն չունի, ինչպես որ գոյություն չունեն յուրահատուկ հանցավոր հատկություններ ու հատկանիշներ։ Մարդկանց անհատական հատկությունները կարող են նպաստել կամ խանգարել նրանց կողմից հանցագործությունների կատարմանը, բայց չեն կարող անխուսափելիորեն մղել հանցագործության կատարման։ Հանցագործություն կատարած անձնավորության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր դեպքերում կարելի է նրա մեջ հայտնաբերել այնպիսի հատկություններ, որոնք արտաքին գործոնների բացասական ազդեցության հետ զուգակցված, գիտակցական որոշման հետևանքով նրան դրդում են հանցագործության։ Իսկ վարքագծի տարբեր ձևերի գիտակցական որոշման մեխանիզմի ուսումնասիրությունները հանգեցրել են այն համոզման, որ մարդու վրա մեծ ազդեցություն են գործում ոչ միայն արտաքին միջավայրը, այլ այդ մեխանիզմի ներքին բաղադրիչները, որոնք կապված են անհատի սոցիալական, սոցիալ-հոգեբանական և կենսաբանական առանձնահատկությունների հետ։ Այս կապակցությամբ նկատենք, որ քրեագիտական գրականության մեջ անհատի հակաիրավական վարքին նպաստած ներքին (սուբյեկտիվ) պայմանները երկար ժամանակ անվանվում էին անհատի հակահասարակական նպատակադրում[11], թեև շատ հեղինակներ գտնում էին, որ ավելի ճիշտ կլինի հակահասարակական գործունեության այդ ներքին մեխանիզմն անվանել անհատի հակահասարակական նպատակամղվածություն[12]։ Մյուս կողմից, մի շարք աշխատություններում կասկածի տակ դրվեց հանցավոր վարքի բացատրման համար հակահասարակական նպատակադրում հասկացությունն օգտագործելու նը-

---

Проблема преступности, М., 1969; К. Е. Игошев, Криминалистическое значение противоречий в формировании личности («Советское государство и право», 1969, № 9, с. 49—58); А. Г. Ковалев, Психологические основы исправления правонарушителя. М., 1968; А. М. Яковлев. Взаимодействие личности со средой как предмет криминологического исследования («Советское государство и право», 1966, № 2); его же, Некоторые теоретические вопросы изучения личности преступника («Проблемы искоренения преступности», М., 1965) и др.

9 А. М. Яковлев, Некоторые теоретические вопросы изучения личности преступника; Н. Н. Карпец, նշվ. աշխ.։

10 Н. С. Лейкина, նշվ. աշխ., էջ 9, В. Н. Кудрявцев, նշվ. աշխ., էջ 34 и др.

11 А. В. Сахаров, О личности преступника и причинах преступности в СССР, М., 1961, с. 162—172; В. Н. Кудрявцев, նշվ. աշխ., էջ 33—37; А. М. Яковлев, նշվ. աշխ., էջ 86.

12 Н. С. Лейкина, նշվ. աշխ., էջ 15—20, Ю. Д. Блуштейн, Теоретические вопросы статистического изучения личности преступника (автореферат кандидатской диссертации. Вильнюс, 1968, с. 6 и др.).

պատակահարմարությունն առհասարակ, քանի որ այն ենթադրում է մարդու հոգեկանի մեջ արտագիտակցական պրոցեսների առկայություն[13]։ Դրան զուգընթաց, որոշ հեղինակներ գտնում են, որ հակահասարակական նպատակադրում ունեն բոլոր հանցագործները, և դա ամեն մի հանցագործության անմիջական պատճառն է[14]։

Մենք գտնում ենք, որ սխալ է հակահասարակական նպատակադրման առկայություն տեսնել ամեն մի հանցագործության մեջ և այն դիտել որպես նրա անմիջական պատճառ։ «Նպատակադրումը,— գրում է Ի. Ս. Կոնը,— այս կամ այն պահանջարկը բավարարելու ընդունակ, որոշակի ակտիվության պատրաստ լինելու վիճակ է..., որը ղեկավարող ազդեցություն է գործում դրա հետ կապված բոլոր օբյեկտների նկատմամբ անհատի վերաբերմունքի վրա...։ Այն ներառնում է թե՛ միտքը, թե՛ զգացմունքը և թե՛ գործելու մղումը»[15]։ Եթե նման նպատակադրում ունեն գողերը, հափշտակիչները, սպեկուլյացիայով, խարդախությամբ զբաղվողները և այլ բնույթի դիտավորյալ հանցագործություն կատարողները, ապա այդպիսին չունեն այն անձինք, ովքեր հանցանքը կատարել են հանգամանքների պատահական բերումով, հակասական գործողության հետևանք հանդիսացող հանկարծակի հոգեկան խիստ հուզմունքի (աֆեկտի), անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցման դեպքում, անզգուշության պատճառով և այլն։ Նման իրավիճակում կատարվող հանցագործությունների մեջ չի արտահայտվում հակահասարակական գործողություններ կատարելու նպատակամղվածություն. դրանք սոսկ հետևանք են այն բանի, որ մեղավոր անձը բավականաչափ ուժ չի ունեցել ստեղծված անբարենպաստ իրավիճակին հակադրվելու օրինական գործողությունների միջոցով։ Այդուհանդերձ, մեր կարծիքով, քրեագիտական հետազոտություններում նպատակադրման հասկացության օգտագործումը, որպես անհատի հակահասարակական կողմնորոշման սիստեմի, հնարավորություն է տալիս հաշվի առնել անհատի հոգեկան գործունեության բոլոր բաղադրիչները՝ իրենց դինամիկ վիճակով։ Ուստի, հակահասարակական վարքի դրսևորման պատճառները և դրանց վերացման ուղիները հետազոտող գիտության ճյուղերում անհրաժեշտ է օգտագործել նպատակադրման հոգեբանական հասկացությունը. իրավացի չեն այն հեղինակները, որոնք ժխտում են դրա նշանակությունը՝ հանցավոր վարքի ձևավորման ավելի խոր ըմբռնման համար։

Իսկ ի՞նչ տվյալներից ելնելով կարելի է դատել իրավախախտողի հակահասարակական հայացքների կայունության, դրանց առկայության կամ բացակայության մասին։ Նկատի առնելով, որ հակահասարակական նպատակամղվածությունն առնչվում է իրավախախտողի անձնավորության սոցիալ-հոգեբանական բնութագրի հետ, կարելի է դատել միայն դրա ավել կամ պակաս հավանական կայունության մասին։ Եթե այդ բանը դժվար չէ անել հատկապես վտանգավոր կրկնահանցագործների հանդեպ, ապա չափազանց դժվար է այն անձանց նկատմամբ, որոնք հանցագործություն կամ զանցանք են կատարել առաջին անգամ, անզգուշության պատճառով, անհրաժեշտ պաշտպա-

---

13 И. И. Карпец, նշվ. աշխ., էջ 82—87։

14 Р. Г. Зуйков, К вопросу о понятии причин преступлений и условий, способствующих его совершению («Вопросы предупреждения преступности», М., 1965, с. 85); А. В. Сахаров, նշվ. աշխ., էջ 58—59, 195.

15 И. С. Кон, նշվ. աշխ., էջ 27—28։

նության սահմանների անցման պայմաններում, աֆեկտի վիճակում, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրման ազդեցությամբ կամ էլ հանգամանքների պատահական բերումով։ Իրավախախտողի մեջ հակահասարակական կողմնորոշման առկայության, դրա կայունության կամ բացակայության գնահատման չափանիշը պետք է լինեն օբյեկտիվացված դրսևորումները՝ հակաիրավական այն գործողությունները, որոնք արտահայտված են օրենքով արգելված վարքի մեջ։ Ա. Ի. Գերցենի պատկերավոր արտահայտությամբ՝ «գործողությունը անհատն ինքն է»[16]։ Նույնանման միտք է արտահայտել Ի. Պ. Պավլովը. «ավելի կարևոր է ստույգ իմանալ արտաքին վարքը, քան գուշակություններ անել նրա ներքին վիճակի մասին՝ նրա բոլոր բարդ մտահղացումներով և տատանումներով հանդերձ»[17]։ Սակայն այնքան էլ ճիշտ չէր լինի անհատի հակահասարակական նպատակադրվածության գնահատականը տալ միայն հակաիրավական վարքի կատարված փաստի հիման վրա, այսինքն միայն մի արարքի հիման վրա անհնար է գնահատել անհատի ամբողջ բարոյական կերպարը։ Այս պատճառով ՍՍՀ Միության և միութենական հանրապետությունների քրեական օրենսդրության հիմունքները կատարված հանցագործության ծանրության հասկացությունն առանձնացնում է այդ հանցագործությունը կատարած անձի հանրավտանգավորության աստիճանից։ Եթե անհատի հանրավտանգավորության աստիճանն իր համապատասխան արտահայտությունը գտներ արարքի մեջ, ապա անհրաժեշտ չէր լինի օրենքի մեջ առանձնացնել այդ երկու հասկացությունները։ Իրավախախտողի անձնավորության մասին տվյալները կարող են երբեմն նկատելիորեն նվազեցնել կամ մեծացնել նրա հանրավտանգավորությունը, որը կարևոր նշանակություն ունի պատժի անհատականացման և իրավախախտողի արարքի որակման, պատժի տեսակի և չափի համար։ Մյուս կողմից, ինչպես վերը նշեցինք, սխալ է հասարակական կողմնորոշման առկայության մասին դատել հակաիրավական վարքի միայն մի փաստի հիման վրա, քանի որ այդ դեպքում խորամուխ չենք լինում դրա ձևավորման էության մեջ։ Տեսադաշտից դուրս են մնում անհատի հակաիրավական կամ անբարոյական վարքի մյուս փաստերը, որոնք կարող են չափազանց արժեքավոր տեղեկություններ տալ հանցավորության նպատակադրվածության ձևավորման պատճառների բացահայտման և դրանց բացատրման համար։ Միանգամայն ակներև է, որ ոչ հանցավոր բնույթի այդ փաստերի պարզաբանումն օգնում է ավելի ստույգ բացահայտել հակահասարակական նպատակադրման ձևավորման մեխանիզմը, ի հայտ բերել արտաքին անբարենպաստ այն ազդեցությունները, որոնց անհատը ենթարկվել է հակաիրավական արարքին նախորդած ժամանակամիջոցում։ Բացի այդ, հիշյալ գործոնների լուսաբանումը հնարավորություն է տալիս կանխել հակահասարակական հայացքների և մղումների անցանկալի ձևավորումը ուրիշների մոտ։

Վերը շարադրված մեր տեսակետն իր հիմնավորումը գտավ այն տվյալներում, որ ձեռք բերեցինք սպեկուլյացիա կատարած անձանց ուսումնասիրության ընթացքում[18]։

---

[16] А. И. Герцен, Избранные философские произведения, М., 1946, с. 70.

[17] И. П. Павлов, Полное собрание сочинений. т. 3, М., 1951, с. 169.

[18] Մեր կողմից հետազոտվել է 1972—1978 թթ. ՀՍՍՀ-ում սպեկուլյացիա կատարելու համար դատապարտված անձանց վերաբերյալ քրեական գործերի ավելի քան 60 տոկոսը։

Հետազոտելով այն խնդիրը, թե սպեկուլյացիայով զբաղվող անձինք արդյոք ունե՞ն հակահասարակական կայուն կողմնորոշում, ելնում ենք այն բանից, որ այդ հարցին դրականորեն պատասխանելու համար միայն տվյալ հանցագործության կատարման փաստը հաշվի առնելը բավական չէ։ Այս դեպքում խիստ անհրաժեշտ է նկատի ունենալ անձի վարքի տվյալները սպեկուլյացիա կատարելուց առաջ։ Հակահասարակական կողմնորոշման անվիճելի առկայության մասին են վկայում այնպիսի տվյալներ, ինչպիսիք են նախկին դատվածությունները՝ կանխամտածված այլ հանցագործությունների համար, վարչական կամ հասարակական ներգործության միջոցների կիրառումը՝ հակաիրավական և անբարոյական վարքի համար, հանրօգուտ աշխատանքից խուսափելու, պորտաբույծ կյանք վարելու փաստերը և այլն։ Վերջապես, սպեկուլյացիայով զբաղվող անձանց հակահասարակական կողմնորոշման մասին կարող է վկայել հենց նրանց սպեկուլյատիվ գործունեությունը, դրա տևականությունը, ծավալը, հանցավոր շահի չափերը, սպեկուլյացիային ուղեկցող այլ հանգամանքները՝ սպեկուլյացիայի համար այն ապրանքանյութական արժեքների օգտագործումը, որոնք մեղավոր անձին վստահված են ի պաշտոնե, սպեկուլյացիայով զբաղվելու համար խումբ կազմակերպելը, պետական կամ հանրային հափշտակված գույքի գնումն ու վերավաճառումը և այլն։ Ելնելով այս չափանիշներից, կարելի է ասել, որ Հայկական ՍՍՀ-ում սպեկուլյացիայով զբաղվող անձանց մեջ կայուն հակահասարակական կողմնորոշման առկայության հարցին պետք է մոտենալ դիֆերենցված ձևով։ 1972—1978 թթ. սպեկուլյացիայով զբաղված մարդկանց 10,6 տոկոսը նախկինում քրեական պատասխանատվության է ենթարկվել տարբեր հանցագործությունների համար. ընդ որում, չորս տոկոսը՝ շահադիտական հանցագործությունների կատարման համար (պետական, հանրային կամ քաղաքացիների անձնական գույքի հափշտակում, սպեկուլյացիա), մյուսները՝ անձի նրկատմամբ բռնի ոտնձգությունների, խուլիգանության և այլ հանցանքների համար։ Ուսումնասիրված բոլոր մարդկանց միայն 1,5 տոկոսն է նախկինում վարչական կամ հասարակական ներգործության միջոցների ենթարկվել հակահասարակական վարքի համար։

Այսպիսով, սպեկուլյացիայով զբաղվող անձանց նախկին հակահասարակական գործունեությունը բնութագրող տվյալները բավարար հիմքեր չեն տալիս դատելու այդ հանցագործության կատարման նպատակով նրանց մեջ հակահասարակական կայուն կողմնորոշման առկայության վերաբերյալ։ Ակներև է, որ այդ մասին տվյալներ կարող են ստացվել սպեկուլյանտի անձնավորության սոցիալ-հոգեբանական հատկությունների, ապրանքներ ու այլ առարկաներ գնելու և վերավաճառելու նրա գործունեության առանձնահատկությունների վերլուծության միջոցով։

Առանձին տեսակի հանցագործություններ կատարած սուբյեկտների մեջ հակահասարակական կողմնորոշման առկայության և դրա խորության աստիճանի մասին գաղափար կազմելու համար կարևոր են ընդհանրացված բնութագրերը, որոնք բովանդակում են սոցիալական ավյալներ այդ հանցագործությունները կատարողների մասին։ Այդ բնութագրերն անհրաժեշտ են նրանց հակահասարակական հայացքների, ունակությունների ու սովորությունների ձևավորման մեխանիզմն ըմբռնելու համար։ Հանցագործի անձի սոցիոլոգիական բնութագրի լույսի տակ հնարավոր է ի հայտ բերել հակաիրավական վար-

էի պատճառական պայմանավորվածությունը, հանցագործության կատարման կոնկրետ պատճառները։ Դժբախտաբար, քրեական իրավունքի գրականության մեջ նկատվում է սպեկուլյացիա կատարած անհատի կոմպլեքսային բնութագրի կարևորության թերագնահատումը։ Այդ հանցագործության հետազոտմանը նվիրված նույնիսկ ամենավերջին աշխատություններում բերվում են միայն առանձին տվյալներ, որոնք ամբողջական պատկերացում չեն տալիս ժամանակակից իրավախախտիչի մասին։ Դրանց մեջ շարադրվող սոցիալ-դեմոգրաֆիկ բնութագրերը չեն բացահայտում ժամանակակից սպեկուլյանտի անձնավորության, նրա սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները[19]։

Հանցագործությունների կոնկրետ տեսակները հետազոտելիս հանցագործների առանձին կատեգորիաների սոցիոլոգիական բնութագրի թերագնահատմանը, մեր կարծիքով, մեծ չափով նպաստում է նաև այն, որ սովետական քրեական իրավունքի տեսության մեջ «հանցագործության սուբյեկտ» հասկացության մասին միասնական կարծիք չկա։ Ներկայումս այդ հարցի շուրջ ծավալվող վեճի էությունն այն է, թե «հանցագործության սուբյեկտ» հասկացությունը պե՞տք է արդյոք բովանդակի հանցագործություն կատարած անձի սոցիալ-քաղաքական բնութագիրը։ Ժամանակին սովետական քրեական իրավական գրականության մեջ այդ հարցին դրական են պատասխանել Բ. Ս. Նիկիֆորովը[20] և Վ. Գ. Բելյաևը[21]։ Հանրահայտ է նաև Ն. Ֆ. Կուզնեցովայի[22] պաշտպանությանն արժանացած Ֆ. Պոլյաչեկի դիրքավորումը, որը հանդես էր գալիս հանցագործություն կատարած անձի սոցիալ-քաղաքական բնութագիրը «հանցագործության սուբյեկտ» հասկացության մեջ մտցնելու օգտին։ Հիմնավորելով իր տեսակետը, Ֆ. Պոլյաչեկը գրում էր, որ դրա դեմ «առարկում են այն իրավաբանները, որոնք դեռ չեն ազատվել մտածողության ձևական-իրավաբանական մեթոդից, որոնք ձևը անջատում են բովանդակությունից, իրավունքը՝ իրականությունից, որոնք ելնում են պատճառական և նորմատիվ աշխարհի մասին ուսմունքից, որի համաձայն իրավունքի սոցիալ-քաղաքական բովանդակությունը անհրաժեշտ է բացառել քրեական իրավագիտությունից և դարձնել ինքնուրույն գիտություն՝ քրեական սոցիոլոգիայի առարկա»[23]։

Հանցագործություն կատարած անձի սոցիալ-քաղաքական բնութագիրը «հանցագործության սուբյեկտ» հասկացության մեջ մտցնելու դեմ հանդես է գալիս Ն. Ս. Լեյկինան[24]։ Ընդ որում, նա իր դիրքավորումը պատճառաբանում

---

[19] Г. И. Вольфман, Преступление против советской торговли, Саратов, 1977, с. 54—60.

[20] Б. С. Никифоров, Освобождение от уголовной ответственности и наказания («Социалистическая законность», 1960, № 1, с. 12).

[21] В. Г. Беляев, Тезисы доклада на межвузовской научной конференции в Ростове-на-Дону, Ростов-на-Дону, 1960, с. 16.

[22] Н. Ф. Кузнецова, Рецензия на книгу Ф. Полячека «Состав преступления по чехословацкому уголовному праву» («Правоведение», 1960, № 3, с. 153); ее же, Преступление и преступность, М., 1969, с. 65.

[23] Ф. Полячек, Состав преступления по чехословацкому уголовному праву, М., 1960, с. 194.

[24] Н. С. Лейкина, Личность преступника и уголовная ответственность; ее же, О включении в составы преступлений признаков, характеризующих личность преступника («Правоведение», 1966, № 1, с. 76—83).

է նրանով, որ «անհատի սոցիալ-քաղաքական բնութագիրը՝ որպես հատկանիշ հանցակազմի մեջ մտցնելը, կհանգեցնի քրեական պատասխանատվության հիմքի ծայրահեղ անորոշության, նրա տարտամության և, վերջին հաշվով. օրինականության անհամար խախտումների»[25]։

Թեև Ֆ. Պոլյաչեկի բերած պատճառաբանությունը թվում է, թե հիմնավոր է, բայց հազիվ թե կարելի լինի նրա հետ համաձայնել այն հարցում, թե հանցագործություն կատարած անձի սոցիալ-քաղաքական բնութագիրը պետք է դառնա «հանցագործության սուբյեկտ» հասկացության տարրերից մեկը։ «Հանցագործության սուբյեկտ» հասկացության մեջ այդ տարրը մտցնելը անխուսափելիորեն հանգեցնում է այն բանին, որ դա դառնում է հանցակազմի հատկանիշներից մեկը։ Մինչդեռ ձևակերպելով հանցակազմերը, Հայկական ՍՍՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում, օրենսդիրը խուսափում է գնահատության այնպիսի հասկացությունների գործածումից, ինչպիսին է այս կամ այն անձի սոցիալ- քաղաքական բնութագիրը։ Հիմքեր կան ընդունելու, որ տվյալ դեպքում օրենսդրի կողմից ձևական, որոշակի կատեգորիաների օգտագործումը ծառայում է հանցավորի և ոչ հանցավորի առավել հստակ սահմանազատմանը և հանցակազմերի մի մասի տարբերակմանը մյուսներից, որն ապահովում է սոցիալիստական օրինականության սկզբունքի իրականացումը սովետական քրեական իրավունքի մեջ։ Մյուս կողմից, օրենսդիրը բավական լայնորեն է օգտվում հանցագործություն կատարած անձի հանրավտանգավորության հատկանիշից[26]։ Կասկածից վեր է, որ այդ հատկանիշը չի կարող սպառիչ կերպով բացահայտվել տվյալ անձի կատարած հանցավոր գործողությունների միայն բնութագրումով։ Հանցագործություն կատարած անձի հանրավտանգավորության աստիճանը լրիվ բացահայտելու համար անհրաժեշտ է ներգրավել նաև այն տեղեկությունները, որ տալիս է անձի սոցիալ-քաղաքական բնութագիրը։

Այսպիսով, հանցակազմի սահմաններից դուրս բերելով տվյալ հանցագործությունը կատարած անձի սոցիալ-քաղաքական բնութագիրը, օրենսդիրը ընդգծում է դրա հետազոտման անհրաժեշտությունը, պատասխանատվության տեսակը՝ քրեական պատժամիջոցն ու պատժաչափը որոշելիս։ Դա նշանակում է, որ թեև հանցագործություն կատարած անձի սոցիալ-քաղաքական բնութագիրը չի կարող մտցվել «հանցագործության սուբյեկտ» հասկացության մեջ, բայց նրա քրեաիրավական նշանակությունն անվիճելի է, և հենց դրա համար էլ քրեական իրավագիտության առարկան է։ Ուստի, անհամոզիչ են Ն. Ս. Լեյկինայի առարկություններն այն առթիվ, որ քրեական իրավունքի հատուկ մասի մի շարք դասագրքերում հանցագործության սուբյեկտի՝ որպես հանցակազմի տարրի, վերաբերյալ բաժիններում մտցված է նրանց սոցիալ-քաղաքական բնութագիրը[27]։

Հանցագործություն կատարած անձի սոցիալ-քաղաքական բնութագիրը «հանցագործության սուբյեկտ» հասկացության մեջ մտցնելու հարցի առթիվ Ն. Ս. Լեյկինայի և Ֆ. Պոլյաչեկի արտահայտած իրարամերժ կարծիքները, ըստ երևույթին, բխում են այն բանից, որ բավարար չափով չի մշակված

---

25 Н. С. Лейкина, Личность преступника и уголовная ответственность, с. 64.

26 «Հայկական ՍՍՀ քրեական օրենսգիրք», Երևան, 1978 (Ընդհանուր մաս)։

27 Н. С. Лейкина, նշվ. աշխ., էջ 67։

քրեական իրավունքի սոցիոլոգիայի ընդհանուր պրոբլեմը։ Կոնկրետ քրեաիրավական հասկացությունների, այդ թվում նաև «հանցագործության սուբյեկտ» հասկացության հետազոտման սոցիոլոգիական մեթոդների կիրառումը ընդգրկվում է քրեական իրավագիտության շրջանակներով, ուստի և վերացնում է դրա ձևականացման սպառնալիքը, ինչից և վախենում է Ֆ. Պոլյաչեկը։ Դրանք չեն ազդում օրենսդրականորեն սահմանված նորմերի կառուցվածքի վրա՝ պահպանելով նրանց ձևական որոշակիության աստիճանը, որն անհրաժեշտ է դատական պրակտիկայի կայունության համար, որին և փաստորեն ձգտում է Ն. Ս. Լեյկինան։ Միևնույն ժամանակ հետազոտման այդ մեթոդները ծառայում են օրենսդրի կողմից առաջադրված խնդրի՝ հանցագործություն կատարած անձի հանրավտանգավորության, բազմապատկանի ուսումնասիրման խնդրի կատարմանը։

Վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ հանցագործության սուբյեկտի սոցիոլոգիական բնութագիրն ավելի լայն է նրա իրավաբանական հատկանիշների համեմատությամբ և դրանց հետ մեկտեղ ընդգրկում է նաև անհատի սոցիալ-դեմոգրաֆիական և բարոյահոգեբանական բնութագիրը։ Հանցագործության սուբյեկտի ուսումնասիրման ենթակա հատկանիշների այդ ընդլայնումը հնարավորություն է տալիս նախ՝ ճիշտ դնահատել անձնական հատկությունների դերը հանցավոր վարքի ձևավորման գործում, երկրորդ՝ որոշել սոցիալական և հոգեբանական բնութագրերի հարաբերակցությունը հակահասարակական նպատակադրության ձևավորման գործում, երրորդ՝ դրա հիման վրա մշակել հանցագործությունների որոշակի կատեգորիաների կանխարգելման առավել արդյունավետ միջոցներ։

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ХАРАКТЕРИСТИКИ ЛИЦА, СОВЕРШИВШЕГО ПРЕСТУПЛЕНИЕ

ОНИК ГАЛИКЯН

Резюме

Установить особенности личности, влияющие на избрание ею того или иного способа преступного действия или бездействия, а в связи с этим на выбор определенного вида преступления—задача важная как в теоретическом плане, так и в плане практической деятельности по борьбе с преступностью.

Поиски механизма принятия сознательного решения привели к выводу, что при этом необходимо исследовать не только внешнее воздействие на человека окружающей среды, но и внутренние компоненты этого механизма, связанные с психическими особенностями личности. На выбор лицом преступного поведения оказывают влияние некоторые свойства личности, сформировавшиеся у нее в период, предшествующий совершению противоправного деяния.

Для обоснованного суждения о наличии антиобщественной ориентации у субъектов преступлений и о степени ее глубины важно знать обобщающую социологическую характеристику субъекта преступления,

включающую в себя наряду с его юридическими признаками также социально-демографическую и нравственно-психологическую характеристику личности.

Такое расширенное изучение субъекта преступления даст возможность, во-первых, правильно оценить роль личностных свойств в формировании преступного поведения, во-вторых, определить соотношение социальных и психологических характеристик в формировании антиобщественной направленности и, в-третьих, выработать наиболее эффективные меры по предупреждению определенных категорий преступлений.